ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ ՏՕՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(26 մարտ 2012 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամեն:

«Մենք զայս ճշմարիտ հաւատս ունիմք ի սուրբ գրոց եւ յօրինաց
եկեղեցոյ, առաջնորդ կենաց ճանապարհի առ Ատրուած
եւ ի Սուրբ Գիրս վարդապետութեան հաւատովք,
Եւ մի՛ խոտորիք ի կարգաց իմաստութեան
մի յաջ եւ մի յահեակ»:
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
(Ագաթանգեղոս, ԽԱ.)

Հարգելի հավատացյալ ժողովուրդ, IV դարում մեր առաջին քահանայապետի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի այս խոսքերը այսօր՝ 21-րդ դարում մեզ համար հնչում են նույնքան արդիական եւ նույնքան կարեւոր մի շեշտադրությամբ: Մեր ժողովուրդը 301 թվականից պետականորեն ընդունել է ճշմարիտ հավատքը, եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ այդ մարդասիրական հավատքի առաջին ջահակիրը մեր աշխարհի, հորդորում է երբեք չխոտորվել Սուրբ Գրքից եւ ճշմարիտ հավատքից՝ դրա մեջ տեսնելով մեր ժողովրդի առաջընթացը ապահովող կայուն հիմքը: Ճշմարիտ է, որ մինչեւ Լուսավորիչը քրիստոնեությունը Հայաստան աշխարհում քարոզել են Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալները, սակայն Հայաստանյայց Եկեղեցու հաստատության եւ կազմակերպության գործը կատարված է Գրգոր Լուսավորչի ձեռքով, Արարչի ամենասքեղծ կամքով:

Արդ՝ հայոց առաքյալների հաջորդությունը Հայաստանում ամփոփվեց Սուրբ Գրգոր Լուսավորչի մեջ, եւ Միածինն էլ, իջնելով նրան պատվիրեց. «Զգոյշ լեր աւանդիդ, որ քեզ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոս է»: /Ագաթ.էջ 439 /

Ագաթանգեղոս պատմիչը մանրամասնաբար մեզ է ներկայացնում Գրիգոր Լուսավորչի կյանքի բոլոր մանրամասները՝ ընդգծելով նրա քրիստոսանվեր վարքը, նրա տանջանքները Երզնկայում, ապա Խորվիրապում, ուր Աստվածային ողորմածությամբ խոր գուբի մեջ Գրիգորը անվնաս ապրեց, որպեսզի հետո դուրս գալով՝ Հայոց աշխարհում իրականացներ աստվածային ծրագիրը:

Լուսավորչի չարչարանքների՝ մեզ հասած մանրամասները խոսում են նրա հավատքի, փոկունության, անձնվիրության մասին: Նրան ոչինչ հետ չպահեց ճշմարիտ հավատքից, չթուլացրեց նրա հոգին: Բազում փառապանքների մեջ էլ նա հաստատեց Աստծուն ծառա լինելու իր կամքը:«,Ես կերկրպագեմ իմ Տեր Աստծուն, քանզի նա է Արարիչը, կյանքն ու հիմքը, եւ Որդուն, որն ստեղծող է, համազոր եւ համագործ է նրա Հոգուն, որն իմաստությամբ լցրեց ամբողջ աշխարհը: Իսկ կռած, կոփած, փորագրած ու ձեռագործ կուռքերը երբեք աստվածներ չեմ համարել եւ այլ կերպ չեմ անի, քանի դեռ շունչ կա իմ մարմնի մեջ» /Ագաթանգեղոս, էջ 73,110/:

Տիրոջ շնորհիվ Գրիգորը դիմացավ բոլոր փորձություններին, փիրոջ զորությամբ մարտնչեց բոլոր թշնամիների դեմ՝ իր մեջ ամրապնդելով պարկեշտությունը, զգաստությունը, հեզությունն ու աստվածպաշտությունը:

Լուսավորչի վիրապային կյանքի վերջին տարիներին, երբ Հայաստանը խարխափում էր խավարի մեջ, Աստծու կամքով հեռավոր Հռոմից Վաղարշապատի մերձակայք հասան Սուրբ կույսերը:

Աստված նախանձախնդիր է իր ծրագիրը իրականացնելուն: Սուրբ կույսերի մարտիրոսությունը, խորապես ցնցեց Հայոց արքա Տրդատին: Խոսրովիդուխտի հորդորները, որ Աստծու հանդեպ սիրո դրսեւորումներ էին, վերջնականապես սանձեցին մոլեգնած Տրդատին. նրա հրամանով Գրիգորը դուրս եկավ Խորվիրապից: Գրիգոր Լուսավորիչը անմիջապես ձեռնարկում է իր առաքելական գործունեությունը:

Ճշմարիտ է, երեք դարերում քրիստոնեությունը Հայաստանում գոյություն ուներ, բայց եկեղեցին դեռ կազմակերպված չեր, դեռ խավարը վերջնականապես չէր լքել Հայոց աշխարհը:

Հայաստանյայց Եկեղեցին իր անունը կրելու իրավունք ստացավ IV դարի սկզբում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի գործունեությամբ: Քրիստոնեությունը դարձավ հայ ժողովրդի համար իրական լույս, եւ նրա կրողն ու մատուցողը մեր ժողովրդի համար դարձավ Լուսավորիչը: Գրիգոր Լուսավորիչն էր, որ մեզ համար դարձավ բարեխոս Աստծու առաջ, եւ նրա նշանավոր Տեսիլքով հիմք դրվեց Միածնաէջ Տաճարի, որը դարձավ մեր ժողովրդի հավատքի մշտանորոգ վեմը:

Գրիգոր Լուսավորչի Տեսիլքով հիմնադրվեց Էջմիածնի Մայր Տաճարը: Այսօր մենք հայտնապես հավատում ենք Տեսիլքի զորությանը, մեր հոգու աչքերով տեսնում ենք բացված երկինքը, որից լուսո շողեր են ճառագում, տեսնում ենք Մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին՝ ձեռքին ոսկեղեն ուռը, որը հարվածում էր գետնին, դղրդացնում էր Սանդարամետը՝ ցույց տալով, մատնանշելով նոր եկեղեցու կառուցման տեղը: Տեսիլքի մեջ ճշգրտորեն նկարագրվում է Մայր Տաճարի տեսքը, որը կրում է աստվածային բարեհաճության դրոշմը: Էջմիածինը մայրն է Հայաստանյայց բոլոր եկեղեցիների, իսկ նրա հիմնադրողը՝ Գրիգոր Լուսավորիչը՝ Աստծու կողմից մեր ընտրյալ առաքյալը: Լուսավորիչը նոր երկինք բացեց իր ազգի համար, բաց արեց Աստծու ողորմածության դռները եւ ցույց տվեց մեզ՝ կատարյալին հասնելու ճշմարիտ ճանապարհը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը ճշմարիտ հավատացյալի իր տքնանքով կարողացավ մի ամբողջ ազգ հեռացնել ապականիչ խավարից եւ տանել դեպի ճշմարիտ լույսը: Նա համոզ-

ված էր, որ իր առջև կտեսներ աստվածապաշտ լուսավոր որդիք, որոնք զերծ կլինեն ամենայն խավարից եւ խորթ մտքերից, որոնք մեծապես կնպաստեն ճշմարտության եւ լույսի հաստատմանը, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու զորացմանը: Անխախտ ու անվախճան է Աստծու տված խոստումը իրեն երկրպագողներին:

Ահա ինչ է ասում Ագաթանգեղոսը. «Աստծու որդին ինքը ձեզ քարոզ ավետեց եւ ինքը ձեզ ուրախարար պատգամների մատռվակ է: Նա ինքը առաջնորդ է մոլորվածների եւ ինքը նավահանգիստ նրանց, որոնց պաշարել է մեղքերի ամբարիշտության ալիքը: Ինքը հույս է իրեն հուսացողներին, մշտնջենավոր, անսպառ անվախճան արքայության մեջ: Նա խրատում է ամենքին, որպեսզի արժանի լինեն մերձենալու աստվածության կոչման որդեգրությանը»:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի մեծագույն երազանքն էր տեսնել իր առաջնորդած զավակներին աստվածության կոչման ճշտմարիտ որդեգիրներ: Պատահական չէ, որ բոլոր դարերում մեր ժողովրդի հավատապաշտ որդիների հայացքը իրականության ամենադժվար պահերին ուղղված է եղել դեպի Արագածի գագաթին երկնքից անթել ու անպարան կախված Լուսավորչի կանթեղին, որի մեջ յուղի փոխարեն Լուսավորչի արցունքն է՝ միշտ բարեխոս Աստծու առաջ: Միածնաէջ այս Տաճարը, որը համայն հայության հավատքի սրբավայրն է, դարձյալ կառուցված է ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Տեսիլքի՝ Աստծու ցուցմամբ:

Լուսավորչի պայծառ անվան հետ է կապված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու իրապես կազմակերպումն ու նպատակների հստակ ձեւակերպումը: Հայաստանյայց եկեղեցին հիմնվեց աստվածային ճշմարտությունների վրա, եւ առ այսօր Սուրբ էջմիածինը իրենից ճառագող մշտացնցուղ լույսով ողողում է Հայաստանյայց եւ աշխարհում սփռված մեր բոլոր եկեղեցիները: Սուրբ Գրիգոր Լուսավորիչն էր, որ Հայաստանի համար նոր երկինք բացեց, բաց արեց աստվածային ողորմածության դռները եւ ճանապարհ ցույց տվեց դեպի կատարելությունն ու հավերժը:

Արդ՝ սիրելի հավատացյալ ժողովուրդ, առաջնորդվելով մեծ խոստովանողի՝ Գրիգոր Լուսավորչի պայծառ գործունեությամբ, լինենք միահոգ, միահավատ, միաքարոզ, աղաչենք Տիրոջը, որ հաստատ պահի իր իսկ ծրագրով ստեղծած Միածնաէջ եկեղեցին եւ ազգիս Հայոց:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանն. ամեն: